ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թագուհի Սլավիկի Չափանյան

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մելսիկի Մկրտչյան**
	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Իրինա Բորիսի Պետրոսյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 7-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ ք. Երևան, 0025, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 1-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Տ. Ս. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Բյուջետային քաղաքականությունը, որպես պետության գործառույթների իրականացման կարևորագույն գործիք, մշտապես գտնվել է տնտեսական վերլուծաբանների և քաղաքականություն մշակողների օրակարգում: Ի թիվս բազմաթիվ նպատակների, այն հետապնդում է նաև մեկ հիմնարար նպատակ՝ տնտեսական աճի խթանում, և հետևաբար այն ունի մեծ դերակատարում ավելի երկար ժամանակահատվածների համար տնտեսական աճի ձեռք բերման գործում:

Ժամանակակից շոկերի պայմաններում էլ ավելի է կարևորվում բյուջետային ծախսային քաղաքականության կարգավորիչ ազդեցության չափի բացահայտումը:

2020թ. կորոնավիրուսի և Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ֆոնին ՀՀ-ում արձանագրվեց ՀՆԱ-ի ծավալների նշանակալից նվազում: Ինչի արդյունքում ՀՀ-ում տնտեսական անկումը կազմեց 7.4%, վերջինս հանգեցրեց ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի 16.3% ավելացման:

Միևնույն ժամանակ, այդ ընթացքում մի քանի ուղղությամբ փաստացի պետական ծախսերը գերազանցեցին նախօրոք ծրագրավորված ծախսերի մակարդակին: Մասնավորապես, 30%-ով աճեցին առողջապահության ոլորտի ծախսերը, 26%-ով՝ պաշտպանության ոլորտի ծախսերը, 11%-ով՝ սոցիալական պաշտպանության ոլորտի: Այս կրճատումները իրականացան ինչպես նոր միջոցների օգտագործման, այնպես էլ տարբեր ուղղությունների միջև բաշխման նոր հարաբերակցությունների հաշվին: Սա ևս մեկ անգամ շեշտադրեց պետական ծախսային քաղաքականության դերակատարությունը: Միաժամանակ, դա բխեցրեց հիմնարար քաղաքա-տնտեսական երկընտրանք՝ լրացուցիչ ֆինանսական պահանջների բավարարում պարտքային ռեսուրսների ավելացմամբ, կամ գոյություն ունեցող բյուջետային միջոցների կառուցվածքային վերանայում և ռեսուրսների առավել արդյունավետ վերաբաշխում: Վերջինս պետք է ընդգրկի և՛ ծախսերի մակարդակի, և՛ առանձին ծախսերի տեսակների ներգործության հայտնաբերումը:

Մեր երկրում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման առանձին հոդվածների ազդեցությունների համապարփակ վերլուծության բացակայությունն էլ պայմանավորում է նման հետազոտության անհրաժեշտությունը:

Ամփոփելով նշենք, որ հետազոտության թեմայի հրատապությունը հիմնվում է Հայաստանի տնտեսական աճի ձևավորման գործում բյուջետային ծախսային քաղաքականության ներգործության գնահատման, դրա էֆեկտիվության վերլուծության և այդ հենքի վրա ծախսային ուղղությունների լավարկման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է բյուջետային ծախսային քաղաքականության ՀՀ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության գնահատումը և այդ քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը:

Հիմնվելով գլխավոր նպատակի վրա ատենախոսության մեջ առաջ են քաշվել և լուծվել հետևյալ հիմնական խնդիրները՝

- վերլուծել պետական ծախսերի դասակարգման համակարգերը՝ վեր հանելով դրանց ձևավորման մեթոդաբանական հիմքերն ու կիրառական նշանակությունը,
- դիտարկել բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխառնչության տեսական հայեցակարգերը, ինչպես նաև ամփոփել այս բնագավառում իրականացված էմպիրիկ վերլուծությունների արդյունքները,
- ուսումնասիրել պետական ֆինանսական միջոցների տեղաբաշխման միջազգային փորձը,
- հետազոտել ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականությունը բնութագրող հիմնական ցուցանիշների շարժընթացը,
- վերլուծել ՀՀ տնտեսական վերելքը պայմանավորող հիմնական գործոններն ու դրանց փոփոխությունները՝ հիմնված ՀՆԱ-ի ծախսային և արտադրական եղանակներով հաշվարկվող բաղադրիչների վերլուծության վրա,
- չափել ՀՀ պետական ծախսերի և տնտեսական աճի միջև առկա փոխկապվածությունը՝ տնտեսաչափական մոդելավորման գործիքակազմի կիրառմամբ,
- վերհանել ՀՀ պետական բյուջեի ծախսային կառուցվածքի կատարելագործման և օպտիմալացման հնարավորությունները,
- նախանշել ՀՀ բյուջետային ծախսերի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմներն ու գործնական ուղիները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան ՀՀ տնտեսական աճի վրա բյուջետային ծախսերի ազդեցությունն է, իսկ հետազոտության օբյեկտը՝ ՀՀ կառավարության կողմից վարվող բյուջետային ծախսային քաղաքականությունը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ուսումնասիրության տեսամեթոդաբանական հենքը ձևավորվել է հայրենական և արտերկրյա գիտնականների ակադեմիական աշխատությունների, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից հրապարակված պաշտոնական զեկույցների, մասնագիտական հոդվածների և աշխատանքային վավերագրերի ուսումնասիրության հիման վրա:

Որպես փաստագրական և տեղեկատվական աղբյուր ծառայել են հեղինակավոր միջազգային կազմակերպությունների (մասնավորապես՝ ՏՀԶԿ, ՀԲ, ԱՄՀ) պաշտոնական վիճակագրական շտեմարանները, ՀՀ պետական գերատեսչությունների՝ Վիճակագրական կոմիտեի, Ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի, տարեկան ամփոփագրերն ու պաշտոնական հաշվետվությունները, ինչպես նաև տվյալ բնագավառը կանոնակարգող իրավական ակտերը:

Առաջադրված գիտագործնական խնդիրների լուծման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են տրամաբանական (ինդուկցիա և դեդուկցիա), համեմատական վերլուծության ու համադրման, ինչպես նաև տնտեսաչափական, մաթեմատիկական մոդելավորման, վիճակագրական և գրաֆիկական վերլուծության մեթոդական գործիքակազմեր: Բյուջետային ծախսերի ազդեցության գնահատման նպատակով օգտագործվել են վեկտորական ավտոռեգրեսիոն և բազմագործոն ռեգրեսիոն մոդելներ:

Հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների ընթացքում ստացված տեսամեթոդական և կիրառական հիմնական արդյունքները հետևյալն են.

- Կառուցված բազմագործոն ռեգրեսիայի և վեկտորական-ավտոռեգրեսիայի (VAR) մոդելների կիրառմամբ գնահատվել են ՀՀ տնտեսական աճի և բյուջետային ծախսերի աճի փոխադարձ ազդեցությունները, ըստ որոնց կարճաժամկետ ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճն ավելի մեծ դրական ազդեցություն ունի բյուջետային ծախսերի աճի վրա, քան բյուջետային ծախսերի աճը՝ տնտեսական աճի: Միաժամանակ, ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ ընթացիկ ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա ավելի մեծ է, քան կապիտալ ծախսերի ազդեցությունը:
- ՀՀ տնտեսական աճի վրա ըստ գործառական դասակարգման բյուջետային ծախսերի ազդեցության գնահատման արդյունքում բացահայտվել է, որ տնտեսական աճին առավել մեծ նպաստ են բերում կրթության և առողջապահության վրա կատարվող պետական ծախսերը՝ որպես մարդկային կապիտալի զարգացման հիմնական գործոններ:
- Էմպիրիկ հետազոտության հիման վրա բացահայտվել է ՀՀ գործառական դասակարգման բյուջետային ծախսերի առաջնային ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի բաղադրիչների վրա, մասնավորապես, տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը դրական են ազդում արտահանման ծավալների, սոցիալական պաշտպանության ծախսերը՝ վերջնական սպառման, իսկ պաշտպանության ծախսերը՝ ներդրումների աճի վրա:
- Մշակվել է «Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվ», որը թույլ է տալիս գնահատել և համեմատել բյուջետային ծրագրերի միջոցառումների արդյունավետությունը՝ դրանց համար սահմանված նպատակների և հատկացված ֆինանսական միջոցների կատարողականի համադրման միջոցով:

Հետազոտության կիրառումն ու գիտագործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում իրականացված գիտահետազոտական աշխատանքի արդյունքում ստացված որակական և քանակական արդյունքները, ինչպես նաև դրանցից ածանցվող եզրակացություններն ու առաջարկությունները ունեն գործնական կիրառելիության ընդարձակ հնարավորություններ:

Դրանք կարող են նպաստել հարկաբյուջետային քաղաքականության մշակման և իրականացման մեխանիզմների կատարելագործմանը, արդյունավետության բարձրացմանը և կառավարման գործընթացների բարելավմանը:

Հետազոտության հիմնական արդյունքներն ու առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ ֆինանսների նախարարության և հարկաբյուջետային քաղաքականության մշակմանն ու իրականացմանն առնչվող այլ պետական մարմինների կողմից, ինչպես նաև ծառայել որպես վերլուծական հիմք հանրային ֆինանսների կառավարման ոլորտում մասնագիտացած փորձագետների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ՊԿԱ Կառավարման ամբիոնի նիստերում, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետների հետ: Ատենախոսության հիմնական դրույթներն արտահայտված են հեղինակի հրատարակած 9, այդ թվում՝ 3 համահեղինակությամբ գիտական հոդվածներում, որոնցից 1-ը ներառված է SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, 118 անուն օգտագործված գրականության ցանկից և 5 հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 157 էջ: Ատենախոսությունը ներառում է 11 աղյուսակ, 43 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, առանձնացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տրվել են աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են ատենախոսության գիտական նորույթները, հիմնական արդյունքները և գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Բյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև կապերի տեսամեթոդաբանական հիմնահարցերը**» գլխում, քննարկվել են բյուջետային ծախսերի ընդհանուր բնութագիրը և հիմնական ուղղությունները: Ներկայացվել և քննարկվել է բյուջետային ծախսերի գործառական, տնտեսագիտական և ծրագրային դասակարգումները՝ որպես պետական ֆինանսների կառավարման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման գործում կարևոր գործիք: Թեև բյուջետային ծախսային քաղաքականությունը հաճախ դիտարկվում է որպես ֆիսկալ քաղաքականության բաղադրիչ, դրա ռազմավարական նշանակությունն ու ազդեցության լայն շրջանակը հիմնավորում են այն որպես ինքնուրույն տնտեսական քաղաքականություն: Ըստ այդմ, տրվել է դրա ամփոփ սահմանումը. *Բյուջետային ծախսային քաղաքականությունը սահմանում է պետական ֆինանսական ռեսուրսների բաշխման կանոններն ու մեխանիզմները՝ ելնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններից և ռազմավարական նպատակներից:*

Ամփոփելով և համադրելով բյուջետային ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցությունների վերաբերյալ գրականության ակնարկը՝ կատարվել է եզրահանգում, որ չնայած թեմայի հետաքրքրությանը, դեռևս չկա այս կապերի վերաբերյալ միասնական մոտեցում: Միևնույն ժամանակ, ոչ մի տնտեսագիտական դպրոցի կողմից չի ամրագրվում ծախսային քաղաքականության էական նշանակություն չունենալը, պարզապես տարբեր դպրոցների կողմից այդ կարևորությունը տարբեր կերպ է մեկնաբանվում: Ըստ ուսումնասիրությունների արդյունքների, արտադրողական

ծախսերը մեծամասամբ տնտեսական աճի վրա ունեն դրական, իսկ ոչ արտադրողական ծախսերը՝ բացասական ազդեցություն: Ընդ որում, ծախսային առանձին բաղադրիչների ազդեցությունը, կախված երկրի տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններից, տարբեր հարաբերակցությամբ է արտացոլվում տնտեսական աճի վրա:

Բյուջետային ծախսերի բաշխման միջազգային միտումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բարձր եկամուտ ունեցող երկրներում ծախսերը հակված են մեծապես կենտրոնանալու սոցիալական պաշտպանության, առողջապահության և կրթության վրա՝ արտացոլելով հասուն սոցիալական համակարգերի և եկամուտների կայուն բազայի առկայությունը: Ընդհակառակը, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում բյուջեների ավելի մեծ մասնաբաժին ուղղվում է ենթակառուցվածքներին, պարտքի սպասարկմանը և հիմնական ծառայությունների մատուցմանը՝ սահմանափակված հարկաբյուջետային տարածքով և զարգացման կարիքներով:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը»** գլխում, վերլուծվել է ՀՀ բյուջետային ծախսերի շարժընթացը, ըստ այդմ, չնայած այն հանգամանքին, որ պետական ծախս/ՀՆԱ հարաբերակցությամբ ՀՀ-ն զիջում է զարգացած տնտեսություն ունեցող երկրներին, սակայն, այս ցուցանիշը 2000-2024թթ. գրանցել է դրական միտում: Վերջինս նշանակում է, որ պետությունը, անընդհատ մեծացնելով պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ, նպաստում է տնտեսության «պետության սահմանների» ընդլայնմանը: Բյուջետային ծախսերի շարժընթացի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ բյուջետային ծախսերին բնորոշ են՝ բարձր կենտրոնացվածությունը, ծախսերի կառուցվածքային անհամաչափությունը, սոցիալական կողմնորոշումը, վարչական ծախսերի բարձր տեսակարար կշիռը, առողջապահության և կրթության ծախսերի համեմատաբար ցածր մակարդակը, տնտեսական զարգացման խթանմանը նպաստող միտումները, ընթացիկ ծախսերի մեծ մասնաբաժինը, տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի քանակի և ֆինանսավորման ծավալների զգալի անհամաչափությունը:

Բյուջետային ծախսերի՝ տնտեսական աճին նպաստման չափի դիտարկմամբ, պարզ է դառնում, որ այն 2000-2024թթ. տատանվել է 0.5–6.5 տոկոսային կետի միջակայքում՝ կախված տնտեսական պարբերաշրջաններից: Ամենամեծ նպաստումը նկատվել է բարձր աճի և ճգնաժամային տարիներին (2007–2008թթ., 2020–2024թթ.): Գործառական դասակարգման հոդվածների նպաստումները դիտարկելիս, պարզ է դառնում, որ տարիների կտրվածքով դրանք եղել են անկայուն և բավականին փոքր (միայն առանձնահատուկ դեպքերում հասելով 2 տոկոսային կետի):

ՀՀ տնտեսական աճի վրա բյուջետային ծախսերի ազդեցությունը գնահատելու համար առաջ են քաշվել հետևյալ վարկածները.

Հիպոթեզ 1. Բյուջետային ծախսերն ունեն վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն տնտեսական աճի վրա:

Հիպոթեզ 2. Տնտեսական աճն ունի վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն բյուջետային ծախսերի վրա:

Հիպոթեզ 3. Ընթացիկ ծախսերի աճը կարճաժամկետում ունի համեմատաբար ավելի ուժեղ ազդեցություն ՀՆԱ-ի վրա, քան կապիտալ ծախսերի աճը:

Առաջադրված առաջին երկու հիպոթեզներն ստուգելու նպատակով մշակվել է վեկտորական-ավտոռեգրեսիայի (VAR) մոդել. Վերլուծության համար կիրառվող VAR մոդելն ունի հետևյալ ընդհանուր տեսքը՝

$$Y_t = \mu + A_1 Y_{t-1} + A_2 Y_{t-2} + \cdots + A_p Y_{t-p} + BX_t + \mathcal{E}_t$$

Որտեղ՝

- Y_t -ն՝ էնդոգեն փոփոխականների j×1 չափանի վեկտորն է, (j=1,2) (մոդելում Y_{1t}-ն բյուջետային ծախսեր (SP) էնդոգեն փոփոխականն է, Y_{2t}-ն՝ իրական ՀՆԱ (GDPR)),
- μ -ն՝ մոդելի հաստատուն գործակիցների j×1 չափանի վեկտորն է (j=1,2),
- A_i-ն՝ էնդոգեն փոփոխականների գործակիցների j×j չափանի մատրիցներն են, i-ն ցույց է տալիս լագը (j=1,2; i=1,2,...,p),
- X_t-ն էկզոգեն փոփոխականների m ×1 չափանի վեկտորն է (m=1,2) (մոդելում՝ X_{1t}-ն՝ բյուջետային եկամուտներ (REV) էկզոգեն փոփոխականն է, X_{2t}-ն՝ պետական պարտք (DBT)),
- B-ն էկզոգեն փոփոխականների գործակիցների j×m չափանի մատրիցն է, m-ը՝ էկզոգեն փոփոխականների թիվը (j=1,2; m=1,2),
- ε_t-ն մոդելի պատահական սխալի j×1 չափանի վեկտորն է (j=1,2):

Մոդելը կառուցվել է 1999-2024թթ. եռամսյակային տվյալների հիման վրա:

Այսպիսով, Granger-ի պատճառականության թեստի համաձայն, վարկածն այն մասին, որ «բյուջետային ծախսերը տնտեսական աճի փոփոխության պատճառ չեն» չի մերժվում, մինչդեռ, մերժվում է վարկածն այն մասին, որ «տնտեսական աճը բյուջետային ծախսերի փոփոխության պատճառ չէ», պատճառականությունը ըստ Granger-ի, պետական պարտքի և բյուջետային ծախսերի միջև բացակայում է: Wald-ի թեստով ստուգվել է վարկածն այն մասին, որ բյուջետային ծախսերը չեն ազդում տնտեսական աճի վրա, և զրոյական վարկածը չի մերժվել:

VAR մոդելի համաձայն՝ ընթացիկ եռամսյակում բյուջեի եկամուտների 1 % աճը նպաստում է տնտեսական աճին 0,19 %-ով, մինչդեռ ընթացիկ եռամսյակում պետական պարտքի 1 % աճը այն նվազեցնում է 0,46 %-ով: 1 % տնտեսական աճը 4 եռամսյակ հետո նպաստում է բյուջեի ընդհանուր ծախսերի աճին 0,31 %-ով, 5 եռամսյակ հետո՝ 0,35 %-ով, 6 եռամսյակ հետո՝ 0,34 %-ով և 7 եռամսյակ հետո՝ 0,43 %-ով: Եկամուտների 1 % աճը նպաստում է ընթացիկ եռամսյակում պետական ծախսերի 0,19 % աճին (տե՛ս Աղյուսակ 1): Միաժամանակ, VAR մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ բյուջետային ծախսերի փոփոխության ոչ մի լագ (t-1-ից մինչև t-8) վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չունի տնտեսական աճի վրա, իսկ պետական պարտքը չունի նշանակալի ազդեցություն բյուջետային ծախսերի վրա:

Աղյուսակ 1. ՀՀ տնտեսական աճի և բյուջետային ծախսերի փոխազդեցության գնահատումը VAR մոդելով (2000-2024թթ.)[1]

Կախյալ փոփոխական	Անկախ փոփոխական	Գործակից
Log (GDPR)	Log (REV_t)	0.19**
	Log (DBT_t)	-0.46**
Log (SP)	Log ($GDPR_{t-4}$)	0.31**
	Log ($GDPR_{t-5}$)	0.35***
	Log ($GDPR_{t-6}$)	0.34**
	Log ($GDPR_{t-7}$)	0.43**
	Log (REV_t)	0.19*

Մոդելի փոփոխականների վրա պատահական շոկերի դինամիկ ազդեցությունների գնահատումը իրականացվել է իմպուլսիվ ֆունկցիայի կիրառմամբ (տե՛ս Գծապատկեր 1)։ Ըստ այդմ՝ ՀՆԱ-ն սեփական շոկի 1 ստանդարտ շեղում աճին դրական է արձագանքում, այնուհետև շոկը տատանումներով շարունակվում է և դանդաղ մարում։ Բյուջետային ծախսերի շոկին ՀՆԱ-ի արձագանքը շատ թույլ է և արձագանքի ֆունկցիան սկսվում է զրոյից, ինչը վկայում է այն մասին, որ պետության ծախսային քաղաքականության դերակատարությունը տնտեսական աճի խթանման գործում դեռևս բավականին փոքր է։ Այս ամենը պայմանավորված է մի շարք գործոններով՝ առևտրի բացության և պետական պարտքի բարձր մակարդակով, տնտեսության կառուցվածքով, գնաճի նպատակադրման ռազմավարությունով, փոխարժեքի ռեժիմով։

Թույլ է նաև բյուջետային ծախսերի արձագանքը ՀՆԱ-ի շոկին, բայց այն թույլ դրական է, այնուհետև թույլ տատանումով մարում է, ինչը նշանակում է, որ պետական ծախսերը չափավոր աճում են, երբ տնտեսությունը ընդլայնվում է, և հարկերի գծով եկամուտների բարձրացման հաշվին աճում են բյուջետային ծախսերը։ ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի իմպուլսային արձագանքի ֆունկցիան հաստատում է Վագների հիպոթեզը, որ ազգային եկամտի աճին զուգընթաց անխուսափելիորեն ավելանում է պետության կողմից վերաբաշխվող ՀՆԱ-ի մեծությունը և, որ պետական ծախսերը ընդհանուր առմամբ հակված են հետևել տնտեսական աճին։ Արդյունքները վկայում են, որ պետական ծախսերը առավելապես արձագանքում են տնտեսական աճին՝ այլ ոչ թե կատարում տնտեսական աճի ակտիվ խթանման գործառույթ։

Սեփական շոկին բյուջետային ծախսերը դրական են արձագանքում, բայց 2 եռամսյակ հետո շոկի ազդեցությունը կտրուկ նվազում է, 3-րդ եռամսյակում՝ աճում է, բայց՝ ավելի նվազ չափով և գնալով՝ մարում։

[1] Այս և մյուս տեղերում՝
* $p < 0.1$՝ վիճակագրորեն նշանակալի է 10% նշանակալիության մակարդակում,
** $p < 0.05$՝ վիճակագրորեն նշանակալի է 5% նշանակալիության մակարդակում,
*** $p < 0.01$՝ վիճակագրորեն նշանակալի է 1% նշանակալիության մակարդակում։



Գծապատկեր 1. Իմպուլսային արձագանք

1-ին եռամսյակում ՀՆԱ-ի շոկերի 100%-ը պայմանավորված է սեփական շոկով: Ժամանակի ընթացքում դրա ազդեցությունը դանդաղ նվազում է. 10-րդ եռամսյակում սեփական շոկի բաժինը կազմում է 88,63%, իսկ բյուջետային ծախսերինը՝ 11,37%: 20-րդ եռամսյակում հարաբերակցությունը գրեթե չի փոխվում՝ համապատասխանաբար 88,29% և 11,7%:

Բյուջետային ծախսերի շոկերի դեպքում 1-ին եռամսյակում գերակշռում է սեփական շոկը (99,75%), իսկ ՀՆԱ-ի շոկը կազմում է ընդամենը 0,25%: Հետագայում սեփական շոկի բաժինը նվազում է՝ հասնելով 93,83% (10-րդ եռամսյակ) և 89,77% (20-րդ եռամսյակ), մինչդեռ ՀՆԱ-ի շոկի ազդեցությունը աճում է՝ 6,17%-ից աճում է մինչև 10,22%:

Մոդելի արդյունքները նշանակում են, որ տնտեսական աճը որոշակի ուշացումով հանգեցնում է պետական ծախսերի աճին: Այս կապը արտացոլում է հարկաբյուջետային քաղաքականության համապարբերաշրջանային օրինաչափությունը, որտեղ տնտեսական ցուցանիշների բարելավումը ստեղծում է հարկաբյուջետային տարածք և խթանում պետական ծախսերի աճը՝ սովորաբար ընդլայնված ծառայությունների, տրանսֆերտների կամ ներդրումների տեսքով: Սակայն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հատկապես տնտեսության ժամանակավոր վերելքներին և կարճատև ընդլայնումներին՝ խուսափելով պատահական եկամուտների հաշվին ծախսերի

ֆինանսավորումից, որը հետագայում կարող է վտանգել իրականացվող նախագծերի շարունակականությունը:

Հիպոթեզ 3-ի ստուգման նպատակով կառուցվել են բազմագործոն ռեգրեսիայի մոդելներ, որոնց արդյունքները ներկայացված են ստորև (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՀՀ պետական բյուջեի կապիտալ և ընթացիկ ծախսերի ՀՆԱ-ի վրա ազդեցության գնահատում (2000-2024թթ.)

Կախյալ փոփ.	Անկախ փոփ.	Գործակից	C	Std. error	T-st.	R^2	Adj. R^2	F-st.	Prob (F-st.)	Դիտ. թիվ
Log (GDPR)	$CPSP_t$	$-5.31E^{-0.9}$	0.02***	$1.68E^{-07}$	-0.03	0.84	0.83	59.7	0.00	97
Log (GDP)	$CPSP_{t-6}$	0.041**	-0.00*	$1.79E^{-07}$	2.29	0.85	0.84	88.4	0.00	94
Log (GDPR)	Log (CSP_{t-2})	0.107**	0.01**	0.033	3.18	0.75	0.73	47.0	0.00	98

Կապիտալ ծախսերի տնտեսական աճի վրա ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կապիտալ ծախսերը տնտեսական աճի վրա չունեն նշանակալի ազդեցություն, միաժամանակ կապիտալ ծախսերը անվանական ՀՆԱ-ի վրա ունեն նշանակալի դրական ազդեցություն: Ըստ այդմ, կապիտալ ծախսերի 1 մլրդ ՀՀ դրամ աճը 6 եռամսյակ հետո անվանական ՀՆԱ-ն ավելացնում է 0.04%-ով: Կապիտալ ծախսերի այսպիսի հարաբերությունը իրական և անվանական ՀՆԱ-ի հետ բացատրվում է այս ծախսերի երկարաժամկետ բնույթով՝ կարճաժամկետում կապիտալ ծախսերը ստեղծում են «շինարարական ակտիվություն», այլ ոչ թե՝ իրական տնտեսական ներուժ: Միաժամանակ, կապիտալ ծախսերի ազդեցության չափը ենթադրում է, որ չնայած ենթակառուցվածքային և ներդրումային ծախսերը ժամանակի ընթացքում նպաստում են ազգային արդյունքին, դրանց կարճաժամկետ և միջնաժամկետ ազդեցությունը անվանական ՀՆԱ-ի վրա սահմանափակ չափով է: ՀՀ-ում այս փոքր ազդեցությունը կարող է բացատրվել հիմնականում՝ ՀՆԱ-ում կապիտալ ծախսերի փոքր մասնաբաժնով՝ անվանական ՀՆԱ-ի մոտ 3.5%, այդ ծախսերի կառուցվածքով, ինստիտուցիոնալ թույլ կողմերով և կապիտալ ծախսերի ֆինանսավորման աղբյուրներով (պետական պարտք), որոնք կարող են հանգեցնել «մեղմման» էֆեկտի: Իսկ ընթացիկ ծախսերի 1% աճը 2 եռամսյակ հետո տնտեսական աճը ավելացնում է 0.107%-ով, այս ծախսերը անմիջականորեն ազդում են իրական ՀՆԱ-ի վրա՝ սպառման բարձր սահմանային հակվածության շնորհիվ:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության կատարելագործման ուղիները»** գլխում, քննարկվել են բյուջետային ծախսերի կառուցվածքի բարելավման հնարավորությունները, ինչը բացահայտելու նպատակով առաջ են քաշվել մի քանի վարկածներ, որոնց միջոցով փորձ է կատարվել բացահայտել գործառական դասակարգման բյուջետային ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի

վրա, ինչպես նաև այդ ծախսերից մի քանիսի ազդեցությունը ՀՆԱ-ի առանձին բաղադրիչների վրա: Ըստ այդմ, առաջ են քաշվել հետևյալ հիպոթեզները.

Հիպոթեզ 4. Պաշտպանության ու հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության վրա կատարվող ծախսերն ունեն հարաբերականորեն թույլ կամ չեզոք ազդեցություն տնտեսական աճի վրա, քանի որ դրանք չեն ուղղվում արտադրողական կարողությունների ավելացմանը:

Հիպոթեզ 5. Տնտեսական աճի վրա նշանակալի դրական ազդեցություն ունեն այն ոլորտներում կատարվող պետական ծախսերը, որոնք ուղղակիորեն նպաստում են արտադրողականության և մարդկային կապիտալի բարձրացմանը, մասնավորապես՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսական հարաբերությունների, կրթության և առողջապահության վրա կատարվող ծախսերը:

Հիպոթեզ 6. Պաշտպանության ոլորտում կատարվող ծախսերն ունեն դրական ազդեցություն համախառն կուտակման վրա: Այս հիպոթեզի հիմքում դրված է այն ենթադրությունը, որ պաշտպանական ծախսերը, չնայած իրենց ոչ արտադրողական բնույթին, կարող են որոշակի պայմաններում ունենալ ներդրումային բնույթի ազդեցություն:

Հիպոթեզ 7. Սոցիալական պաշտպանության ոլորտում կատարվող ծախսերն ունեն դրական ազդեցություն վերջնական սպառման վրա: Այս հիպոթեզի տրամաբանությունը բխում է քեյնսյան պահանջարկի տեսությունից, ըստ որի՝ սոցիալական փոխանցումները մեծացնում են տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտը, որն իր հերթին բարձրացնում է վերջնական սպառման ծավալը:

Հիպոթեզ 8. Տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերն ունեն դրական ազդեցություն արտահանման վրա: Այս հիպոթեզը նպատակ ունի պարզել՝ արդյոք տնտեսական հարաբերությունների ոլորտում կատարվող ծախսերը իրականում ունեն խթանող ազդեցություն արտահանման ծավալների վրա, թե դրանք հիմնականում վարչական բնույթի են:

Առաջադրված հիպոթեզները ստուգելու նպատակով կառուցվել են բազմագործոն ռեգրեսիոն մոդելներ, որոնց արդյունքների ամփոփումը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Գնահատումների արդյունքները ցույց են տալիս, որ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղված ծախսերի 1% աճը երկու եռամսյակ անց կբերի տնտեսական աճի 0,05% ավելացմանը, մինչդեռ պաշտպանության ծախսերի 1 մլրդ ՀՀ դրամ աճը կնվազեցնի տնտեսական աճը 0,06%-ով: Առողջապահության ծախսերի 1% աճը երեք եռամսյակ անց կբերի տնտեսական աճի 0,06% ավելացմանը, իսկ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտում կատարվող ծախսերի 1% ավելացումը երկու եռամսյակ անց կնվազեցնի տնտեսական աճը 0,06%-ով: Կրթության ծախսերի 1% աճը ընթացիկ եռամսյակում կհանգեցնի տնտեսական աճի 0,09%-ով ավելացմանը, իսկ տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերի 1% աճը նույն ժամկետում կբերի տնտեսական աճի 0,02%-ով բարձրացում:

Աղյուսակ 3. ՀՀ գործառական դասակարգման ծախսերի ազդեցության չափը իրական ՀՆԱ-ի վրա (2000-2024թթ.)

Կախյալ փոփոխական՝ Log(GDPR)									
Անկախ փոփոխական	Գործակից	C	Std. error	T-st.	R^2	Adj R^2	F-st.	Prob (F-st.)	Դիտ. թիվ
DEFt	-0.06**	0.02**	3.21E-07	-2.10	0.75	0.73	39.8	0.00	99
Log(HLT_{t-3})	0.05***	0.04***	0.01	3.51	0.81	0.79	49.4	0.00	99
Log($PORD_{t-2}$)	-0.05**	0.04***	0.02	-2.55	0.81	0.79	49.4	0.00	99
Log(EDU_t)	0.08**	0.05***	0.03	2.58	0.71	0.69	37.9	0.00	97
Log(ECO_t)	0.02***	0.01***	0.07	2.72	0.79	0.77	35.8	0.00	94
$GEXP_{t-2}$	0.04*	0.02**	0.03	1.84	0.75	0.73	39.8	0.00	99

Կրթության և առողջապահության դրական ազդեցությունը բացատրվում է նրանով, որ այսպիսի ծախսերը չեն գործում որպես մեկանգամյա կամ կարճաժամկետ խթան, այլ ձևավորում են մարդկային կապիտալի աճ, որը ժամանակի ընթացքում դառնում է տնտեսական աճի հիմնական շարժիչներից մեկը: Հայաստանի տնտեսական աճի ապահովման կարևորագույն նախադրյալներից են մարդկային կապիտալի զարգացումը և դրա արդյունավետ օգտագործումը: Իսկ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ծախսերի տնտեսական աճի հետ բացասական կապը կարող է մեկնաբանվել ոչ միայն այդ ծախսերի ոչ արտադրողական բնույթով, այլ նաև այդ ծախսերի ՀՆԱ-ում ունեցած մեծ մասնաբաժնով, ինչը գերազանցում է համանման երկրների ցուցանիշները, ուստի այս ծախսերի հետագա աճը կարող է դառնալ անարդյունավետ:

Այնուամենայնիվ, պետական ծախսերի առանձին ուղղությունների չափից և բնույթից ելնելով ակնհայտ է, որ դրանք չեն ազդում տնտեսության բոլոր բաղադրիչների վրա նույն ուղղությամբ կամ նույն ինտենսիվությամբ: Ըստ այդմ՝ գնահատվել են պաշտպանության ծախսերի ազդեցությունը համախառն կուտակման վրա, տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերինը՝ արտահանման, իսկ սոցիալական պաշտպանության ծախսերինը՝ վերջնական սպառման վրա (տես՝ Աղյուսակ 4):

Այս տրամաբանությունից ելնելով՝ բացահայտվել է, որ պաշտպանության ծախսերի 1 մլրդ. ՀՀ դրամ աճը 1 եռամսյակ հետո ներդրումներն ավելացնում են 0.27 %-ով: Սա փաստում է, որ նույնիսկ ոչ արտադրողական համարվող ոլորտը, կարող է ունենալ ներդրումները խթանող ազդեցություն՝ պայմանավորված պետական պատվերներով, ռազմարդյունաբերության զարգացմամբ կամ ենթակառուցվածքային համալիրների ընդլայնմամբ:

Աղյուսակ 4. ՀՀ գործառական դասակարգման հոդվածների ազդեցությունը ՀՆԱ բաղադրիչների վրա (2000-2024թթ.)

Կախյալ փոփ.	Անկախ փոփ.	Գործակից	C	Std. error	T-st.	R^2	Adj. R^2	F-st.	Prob (F-st.)	Դիտ. թիվ
Log (INV)	DEF_{t-1}	0.27^{***}	0.04^{**}	$8.68\ E^{-0.7}$	3.12	0.63	0.61	32.9	0.00	99
Log (FCONS)	Log (SOC_t)	0.052^{**}	0.01^{***}	0.00	2.89	0.40	0.37	12.6	0.00	99
Log (EX)	ECO_{t-1}	0.58^{***}	0.02^{**}	0.01	2.09	0.09	0.07	4.61	0.01	92
	ECO_{t-2}	0.33^{*}	0.02^{**}	0.01	2.09	0.09	0.07	4.61	0.01	92

Իսկ տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերի 1 մլրդ ՀՀ դրամ աճի դեպքում արտահանումը մեկ եռամսյակ հետո կավելանա 0.584%-ով, երկու եռամսյակ հետո՝ 0.333%-ով: Սա նշանակում է, որ տնտեսական աճը կարելի է խթանել տնտեսական հարաբերությունների ծախսերը նպատակային ուղղորդելով դեպի արտահանման խթանմանն ուղղված ծրագրերին, սակայն դրանց արդյունավետությունը մեծապես կախված է քաղաքականության շարունակականությունից, ծրագրերի կառուցվածքային (ոլորտային) ուղղվածությունից և մակրոտնտեսական միջավայրի կայունությունից:

Սոցիալական պաշտպանության ծախսերը (նպաստներ, կենսաթոշակներ) գործում են որպես պահանջարկի խթանիչ՝ մեծացնելով տնային տնտեսությունների սպառումը: Սոցիալական պաշտպանության ծախսերի 1% աճի դեպքում վերջնական սպառումը ընթացիկ եռամսյակում կավելանա 0,05%-ով:

Բյուջետային ծախսերի տնտեսական աճին ազդեցության չափը և ուղղությունը կախված է ոչ միայն այդ ծախսերի կառուցվածքից, այլև դրանց կառավարման համակարգի արդյունավետությունից: Ըստ այդմ, ուսումնասիրվել են վերջին տարիների բյուջետային բարեփոխումները, դրանք համեմատվել են ՏՀԶԿ երկրներում տարածված բարեփոխումների հետ, վեր են հանվել ծախսերի կառավարման գործող համակարգերի թույլ կողմերը և մատնանշվել բարելավման ուղղությունները:

Ըստ այդմ, առաջարկվում է կիրառել «բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվ», որը հնարավորություն կտա իրականացնել ծրագրերի նախնական, համառոտ, սակայն, մեթոդաբանական առումով հիմնավորված գնահատում՝ հնարավորինս քիչ վարչարարական ծանրաբեռնվածությամբ:

Համաթվի հաշվարկը հիմնված է հետևյալ երկու ցուցանիշների վրա՝

- ծրագրի (միջոցառման) արդյունքի կատարողական (ծրագրի դեպքում՝ վերջնարդյունքի ցուցանիշ, իսկ միջոցառման դեպքում՝ ուղղակի արդյունքի ցուցանիշ),
- ծրագրի (միջոցառման) ծախսերի կատարողական:

Համաթիվն ունի հետևյալ տեսքը.

$$E_i = \frac{O_{\text{փաստացի}} / O_{\text{պլանավորված}}}{S_{\text{փաստացի}} / S_{\text{պլանավորված}}}$$

որտեղ՝

- E_i-ն ծրագրի կամ միջոցառման արդյունավետության համաթիվն է,
- $O_{\text{փաստացի}}$-ն ծրագրի (միջոցառման) փաստացի արդյունքն է (վերջնարդյունքի կամ արդյունքի փաստացի ցուցանիշ),
- $O_{\text{պլանավորված}}$ – ծրագրի (միջոցառման) պլանավորված արդյունքն է (վերջնարդյունքի կամ արդյունքի պլանավորված ցուցանիշ),
- $S_{\text{փաստացի}}$ -ն ծրագրի (միջոցառման) փաստացի ծախսն է,
- $S_{\text{պլանավորված}}$ – ծրագրի (միջոցառման) պլանավորված ծախսն է:

Ստացված արդյունքների համաձայն, ծրագրերը նպատակահարմար է դասակարգել ըստ արդյունավետության մակարդակի՝ զգալի բարձր, բարձր, բավարար, ցածր և անարդյունավետ:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում նկարագրված են կատարված քանակական և որակական վերլուծությունների հիմնական եզրահանգումները և դրանցից հետևող առավել առանցքային առաջարկությունները, որոնք ուղղված են թե՛ պետական, և թե՛ գիտական հանրությանը: Դրանցից հիմնականներն են՝

1. Հայաստանը պետական ծախսեր/ՀՆԱ ցուցանիշով՝ 28.9%, զիջում է թե՛ զարգացած երկրների, և թե՛ ԱՊՀ միջին ցուցանիշին, ինչը ցույց է տալիս տնտեսությանը պետության համեմատաբար սահմանափակ մասնակցության մասին:
2. Բյուջետային ծախսերի կառուցվածքն արտահայտում է կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության գերակայությունները, ըստ այդմ՝ ՀՀ բյուջեն ունի սոցիալական կողմնորոշում, սակայն, կրթության և առողջապահության ոլորտներին հատկացվող միջոցների համեմատաբար ցածր մակարդակն արտացոլում է կառուցվածքային անհավասարակշռություն, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից:
3. Կառուցված մոդելի համաձայն, բյուջետային եկամուտների աճը և տնտեսական աճը դրականորեն են ազդում պետական ծախսերի վրա: Մինչդեռ, մերժվում է տնտեսական աճի վրա բյուջետային ծախսերի վիճակագրորեն նշանակալի ազդեցության վարկածը: Սա նշանակում է, որ պետական ծախսերը առավելապես արձագանքում են տնտեսական աճին՝ այլ ոչ թե կատարում տնտեսական աճի ակտիվ խթանման գործառույթ:
4. Ընթացիկ և կապիտալ ծախսերի ազդեցությունը բացահայտելու նպատակով կառուցված մոդելները փաստում են պետական ծախսերի երկու տեսակների կարևորությունը ՀՆԱ-ի ձևավորման գործում, չնայած դրանք գործում են տարբեր ժամանակահատվածներում և տարբեր ինտենսիվությամբ: Կապիտալ և ընթացիկ ծախսերի ազդեցությունը դրական է, սակայն էմպիրիկ գնահատումները ցույց են տվել, որ ընթացիկ ծախսերի ազդեցությունը կարճաժամկետում ավելի ուժեղ է:
5. Գործառական դասակարգման մակարդակով ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ տնտեսության համար ըստ ազդեցության (ըստ նվազման

հերթականության) արդյունավետ ծախսերն են՝ կրթության, առողջապահության, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերը: Մինչդեռ, պաշտպանությանը և հասարակական կարգին, անվտանգությանն ու դատական գործունեությանն ուղղվող ծախսերը ցուցաբերում են բացասական ազդեցություն:

6. Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պետական բյուջեի տարբեր գործառական ուղղություններ ունակ են տարբեր ձևերով ազդել ՀՆԱ-ի բաղադրիչների վրա՝ ձևավորելով ինչպես կարճաժամկետ կայունացման մեխանիզմներ, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական աճի ներուժ. ա) սոցիալական պաշտպանության ծախսերը էականորեն խթանում են վերջնական սպառման աճը, բ) պաշտպանության ոլորտի ծախսերի և ներդրումների միջև արձանագրված դրական կապը վկայում է ոչ արտադրողական համարվող ոլորտի ներդրումները խթանող դերի մասին, գ) տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը նպաստում են արտահանման աճին:

7. Տարբեր հետազոտություններ (օրինակ՝ ՀԲ-ի գնահատումներ) վկայում են ՀՀ բյուջետային ծախսերի ցածր արդյունավետության մասին, ինչը պայմանավորված է ոչ միայն ծախսերի կառուցվածքով, այլև բյուջետային համակարգի որոշ բացերով.

- ինստիտուցիոնալ որակի ցածր մակարդակ՝ ՀՀ-ն միջին դիրք է զբաղեցնում հարևան երկրների համեմատ, ընդհանուր ուղղություններից ամենացածրը կառավարման արդյունավետությունը և քաղաքական կայունությունն են,
- ծրագրային բյուջետավորման բարեփոխումներն ուղղորդվել են «գերատեսչական» տրամաբանությամբ, այսինքն՝ գերատեսչությունները իրենց ծախսերը պարտադիր կերպով ներկայացրել են ծրագրային ձևաչափով, առանց խորքային բովանդակային փոփոխություններ կատարելու,
- բյուջետային ծրագրերի կառուցվածքի անհամապատասխանությունը ծախսերի ծրագրային դասակարգման պատճառահետևանքային շղթային, որի արդյունքում հստակ չի արտացոլվում արդյունք-վերջնարդյունք կապը,
- բյուջեի պլանավորումն ըստ ծրագրերի թույլ է զարգացած, ինչը հանգեցնում է փաստացի կատարողականի էական տատանումների, հատկապես՝ բարձր է կապիտալ ծախսերի թերակատարումների մակարդակը,
- ծրագրային կատարողական ցուցանիշների սահմանումը հաճախ պատշաճ չի իրականացվում, թիրախները կարող են լինել կա՛մ թերագնահատված կա՛մ գերագնահատված, ինչը թույլ չի տալիս օբյեկտիվորեն գնահատել ծախսային ծրագրերի արդյունավետությունը,
- բյուջետային ծախսերի (ծրագրերի) համապարփակ գնահատումների բացակայությունը, ինչի իրականացումը կարող է խթանել պետական ֆինանսների ռացիոնալ օգտագործումը:

Կատարված եզրահանգումների հիման ատենախոսությունում մշակվել են հետևյալ առաջարկությունները.

- քանի որ VAR մոդելի արդյունքները հաստատում են պետական ծախսերի համապարբերաշրջանային վարքագիծը, նպատակահարմար է ներդնել

հակապարբերաշրջանային հարկաբյուջետային կանոններ։ Նման կանոնները հնարավորություն կտան տնտեսության կարճաժամկետ վերելքների ընթացքում զսպել պետական ծախսերի կտրուկ ընդլայնումը՝ ապահովելով հակապարբերաշրջանային և առավել կայուն հարկաբյուջետային քաղաքականություն,

- պարբերաբար գնահատել տարբեր ծախսային հոդվածների բազմարկիչների մեծությունները և դրանք համակարգված կերպով կիրառել պետական ծախսերի կառուցվածքի ձևավորման փուլում, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումների մշակման և որոշումների ընդունման ժամանակ,
- կարճաժամկետ տնտեսական ակտիվության խթանման տեսանկյունից առավել արդյունավետ է թիրախավորված ընթացիկ ծախսերի կիրառումը, միաժամանակ, որպեսզի այս խթանումը չկատարվի երկարաժամկետ տնտեսական աճի հաշվին, անհրաժեշտ է պահպանել կապիտալ ծախսերի կայուն և կանխատեսելի դինամիկա՝ դրանք ուղղելով առավել արդյունավետ և բարձր բազմարկչային ազդեցություն ունեցող ոլորտներ, և աստիճանական ավելացնել կրթության և առողջապահության ոլորտներին հատկացվող միջոցները,
- վերանայել պաշտպանությանը, հասարակական կարգին, անվտանգությանը և դատական գործունեությանն ուղղվող ծախսերի կառուցվածքը՝ ոչ առաջնահերթ վարչական ծախսերը փոխարինելով ռազմարդյունաբերությանն ուղղվող ծախսերով,
- շարունակել տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի աճը, քանի որ դրանք դրական ազդեցություն ունեն ինչպես տնտեսական աճի, այնպես էլ արտահանման վրա,
- բյուջետային ծրագրերի պլանավորման ժամանակ առաջնորդվել «Փոփոխությունների տեսությամբ», որը ստեղծում է հստակ տրամաբանական շղթա ներդրանքից մինչև վերջնարդյունք և ազդեցություն,
- ծրագրային բյուջետավորման շրջանակում արդյունքային ցուցանիշների սահմանման մեխանիզմները բարելավելու, դրանց համապատասխանությունը ծրագրերի նպատակներին և իրականացման շրջանակներին ապահովելու նպատակով մշակել կատարողականի ցուցանիշների մշակման վերաբերյալ ուղեցույց,
- պետական ծախսերի արդյունավետության գնահատման համաթվի ներդրում՝ հիմք ընդունելով գնահատման ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարողականը,
- աստիճանաբար զարգացնել բյուջետային ծրագրերի գնահատման կենտրոնացված համակարգ, որը կիրականացնի ինչպես մինչ-ծրագրային, այնպես էլ հետ-ծրագրային գնահատումներ։

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Չափանյան Թ.** «Պետական ծախսերի կառուցվածքի և տնտեսական աճի փոխհարաբերությունների տեսական հիմքեր», Հանրային կառավարում գիտական հանդես, №1, 2021թ., էջեր 77-88, https://paara.am/wp-content/uploads/2023/04/taguhi-chapanyan.pdf
2. **Չափանյան Թ.** «Պետական ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգերի հիմնահարցեր», Հանրային կառավարում գիտական հանդես, №1, 2023թ., էջեր 68-82, DOI 10.55490/18290167-2023.1-68
3. **Chapanyan T.** "Economic Growth of RA and the Role of Public Expenditures in it", Znanstvena misel journal, №84, 2023, pp. 3-10, DOI: https://doi.org/10.5281/zenodo.10389832
4. **Գրիգորյան Կ., Չափանյան Թ.** «Բյուջետային ծախսերի կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)», Տարածաշրջան և աշխարհ №4(53), 2024, էջեր 204-212, DOI: 10.58587/18292437-2024.4-204
5. **Chapanyan T.** "Budget Program Evaluation in Armenia as a Tool to Improve the Effectiveness of Public Spending", Region and the World, №1(50), 2024, pp. 188-197, DOI: 10.58587/18292437-2024.1-188
6. **Chapanyan T.** "The Significance of Expenditure Policy in Fostering Economic Growth (Case of Armenia)", Journal of Economy Bulletin of Yerevan University, Vol. 15 №2 (44), 2024, pp. 120-130, DOI: https://doi.org/10.46991/BYSU.G/2024.15.2.120
7. **Grigoryan K.**, **Chapanyan T.** "Budgetary Reforms and Improvement of Budget Expenditure Management in Armenia Under the Framework of Sustainable Development Goals", Technological Horizons of Decarbonization Based on Environmental Innovations. Advances in Science, Technology & Innovation, Springer, 2025, pp. 365-371, DOI: https://doi.org/10.1007/978-3-031-82210-0_60 **(SCOPUS)**
8. **Grigoryan K., Chapanyan T.**, "The Impact of Government Spending on Economic Growth: The Case of Armenia Under the Global Gateway Partnership", Ordnungspolitische Diskurse. Discourses in Social Market Economy. 2025-5, pp. 1-16 https://www.econstor.eu/bitstream/10419/328269/1/1938236041.pdf
9. **Չափանյան Թ.** «ՀՀ բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման հիմնախնդիրներ», Տարածաշրջան և աշխարհ №1(62), 2026, էջեր 216-224, DOI: 10.58587/18292437-2026.1-216

ЧАПАНЯН ТАГУИ СЛАВИКОВНА

ВЛИЯНИЕ БЮДЖЕТНОЙ РАСХОДНОЙ ПОЛИТИКИ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ РА

Автореферат диссертации представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 7-го июля 2026 года в 14:00, на заседании Специализированного совета по экономике 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете.
Адрес: ул. Налбандяна 128, Ереван, 0025, РА.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена углублённому анализу влияния политики государственных расходов Республики Армения на макроэкономические показатели с особым акцентом на динамику экономического роста.

Основная цель диссертации - оценить влияние бюджетной политики на экономический рост Республики Армения и определить пути совершенствования этой политики.

В рамках исследования поставлены и решены следующие задачи:

- проанализировать системы классификации государственных расходов, выявив методологические основы их формирования и прикладное значение,
- рассмотреть теоретические концепции взаимосвязи бюджетной расходной политики и экономического роста, а также обобщить результаты эмпирических исследований, проведённых в данной области,
- изучить международный опыт распределения государственных финансовых средств,
- исследовать динамику основных показателей, характеризующих бюджетную расходную политику Республики Армения,
- проанализировать основные факторы, обусловливающие экономический рост Республики Армения, а также их изменения, основываясь на анализе компонентов ВВП, рассчитываемых по расходному и производственному методамы,
- измерить взаимосвязь между государственными расходами Республики Армения и экономическим ростом с применением инструментария эконометрического моделирования,

- выявить возможности совершенствования и оптимизации структуры расходной части государственного бюджета наметить механизмы и практические пути повышения эффективности процесса управления бюджетными расходами Республики Армения,
- наметить механизмы и практические пути повышения эффективности процесса управления бюджетными расходами Республики Армения.

Основные научные результаты и инновации проведенного исследования заключаются в следующем:

- С применением моделей многофакторной регрессии и векторной авторегрессии (VAR) были оценены взаимосвязи между экономическим ростом РА и бюджетными расходами. Согласно полученным результатам, в краткосрочном периоде экономический рост РА оказывает более положительное влияние на рост бюджетных расходов, чем рост бюджетных расходов на экономический рост. Одновременно установлено, что в составе общих бюджетных расходов влияние текущих расходов на экономический рост выше, чем влияние капитальных расходов.
- В результате оценки влияния бюджетных расходов по функциональной классификации на экономический рост РА выявлено, что наибольший вклад в экономический рост вносят государственные расходы на образование и здравоохранение как основные факторы развития человеческого капитала.
- На основе эмпирического исследования выявлено первичное влияние бюджетных расходов по функциональной классификации РА на компоненты экономического роста, в частности: расходы, направляемые на экономические отношения, положительно влияют на объёмы экспорта, расходы на социальную защиту- на конечное потребление, а расходы на оборону- на рост инвестиций.
- Разработан «Индекс оценки эффективности бюджетных расходов», позволяющий оценивать и сопоставлять эффективность мероприятий бюджетных программ путём сопоставления установленных целей и исполнения выделенных финансовых средств.

TAGUHI SLAVIK CHAPANYAN

THE IMPACT OF GOVERNMENT EXPENDITURE POLICY ON RA ECONOMIC GROWTH

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - "Economics, Management of the Economy and its Spheres".

The defense of the dissertation will take place at 14:00 on 7th July 2026, at the Meeting of Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, acting at the Armenia State University of Economics.
Address: 128 Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

The dissertation is devoted to an in-depth analysis of the effects of the public expenditure policy of the Republic of Armenia on macroeconomic performance, with particular emphasis on the dynamics of economic growth.

The main goal of the dissertation is to assess the impact of government expenditure policy on the economic growth of the Republic of Armenia and to identify ways to improve this policy.

Within the framework of the research, the following objectives were formulated and addressed:

- to analyze the systems of classification of public expenditures, identifying their methodological foundations and applied significance,
- to examine the theoretical concepts of the interrelationship between budget expenditure policy and economic growth, as well as summarize the results of empirical studies conducted in this field,
- to study the international experience of public financial resource allocation,
- to investigate the dynamics of the main indicators characterizing the budget expenditure policy of RA,
- to analyze the key factors determining the economic growth of RA and their changes, based on the analysis of GDP components calculated using both expenditure and production approaches,
- to measure the interrelationship between public expenditures of RA and economic growth using econometric modeling tools,
- to identify opportunities for improving and optimizing the expenditure structure of the state budget of the Republic of Armenia,
- to outline mechanisms and practical approaches aimed at enhancing the efficiency of public expenditure management in the Republic of Armenia.

The main scientific results and innovations of the conducted research are as follows:

- Through the application of multivariate regression and Vector Autoregression (VAR) models, the interactions between economic growth and budget expenditures of the Republic of Armenia were assessed. The findings indicate that, in the short run, economic growth in RA has a stronger positive impact on the growth of budget expenditures than the growth budget expenditure has on economic growth. At the same time, within total budget expenditures, current expenditures exert a greater impact on economic growth than capital expenditures.
- The assessment of the impact of budget expenditures, classified by functional categories, on economic growth revealed that public spending on education and healthcare makes the largest contribution to economic growth, as they represent key factors in human capital development.
- Based on the empirical analysis, the primary impact of functionally classified budget expenditures of the RA on the components of economic growth were identified. In particular, expenditures directed toward economic affairs positively affect export volumes; social protection expenditures influence final consumption; and defense expenditures contribute to investment growth.
- An "Index for Assessing the Efficiency of Budget Expenditures" was developed, which makes it possible to assess and compare the effectiveness of budget program measures by correlating established objectives with the execution of allocated financial resources.